

# "2025թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ" ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ

## ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ 16-ՐԴ ՄՐՑԱՇՐՋԱՆԻ

### IV ՓՈՒԼ

"2025թ. ՀՀ լավագույն հաշվապահ" անվանակարգում հայտարարված մրցույթի 16-րդ պարբերաշրջանի ընտրական 4-րդ փուլը, որին ներկայացվում է 10 հարցից բաղկացած մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարի ճիշտ պատասխանները կգնահատվեն յուրաքանչյուրը 2 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր (առավելագույնը՝ 20 միավոր):

Խնդրի ճիշտ պատասխանը կգնահատվի 10 միավոր՝ սխալ պատասխանը՝ 0 միավոր (առավելագույնը՝ 10 միավոր):

Չորրորդ փուլին ներկայացված առաջադրանքներից հնարավոր է վաստակել առավելագույնը 30 միավոր:

Չորրորդ փուլին ներկայացված առաջադրանքներից ամենաբարձր միավորներ վաստակած մասնակիցների անունը, ազգանունը կտպագրվի ամսագրի հաջորդ համարում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Չորրորդ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել [press@gortsq.am](mailto:press@gortsq.am) էլեկտրոնային հասցեին մինչև 2025թ. սեպտեմբերի 28-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն [www.gortsq.am](http://www.gortsq.am) կայքէջում՝ 2025թ. սեպտեմբերի 29-ին:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ** – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, լավագույն հաշվապահ միջազգային խորհրդանիշով ոսկեգոր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2026 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

### "2025թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ"

#### ՄՐՑՈՒՅԹԻ 16-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ IV ՓՈՒԼԻ

#### ՀԱՐՑԱՇԱՐԸ

**Հարց 1. 2022 թվականի դեկտեմբեր ամսվա եկամատային հարկի հաշվարկը ենթակա**

**է ստուգման մինչև՝**

ա. 2025թ. դեկտեմբեր,

բ. 2025թ. նոյեմբեր,

գ. վաղեմության ժամկետ սահմանված չէ:

**Հարց 2. ԵԱՏՄ երկներից ներկված ԱԱՀ-ն հաշվանցման ենթակա է այն հաշվետու**

**ժամանակաշրջանում, երբ առնվազն.**

- ա. վճարված է ԱԱՀ-ն, ներմուծման հայտարարագիր և հայտարարությունը ներկայացած է.
- բ. վճարված է ԱԱՀ,
- գ. ներմուծման հայտարարագիր և հայտարարությունը:

**Հարց 3. Ռուսաստանի Դաշնությունում հաշվառված ԱԶ-ին հարկային գործակալի**

**կողմից հայաստանյան աղբյուրներից եկամուտ վաճրելիս հարկային  
գործակալը հարկում է.**

- ա. ԱԱՀ-ով,
- բ. ոճ ռեզիդենտի շահութահարկով,
- գ. եկամտային հարկով:

**Հարց 4. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխությունների արդյունքը՝**

- ա. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվում է միևնույն դասա-  
կարգմամբ, որը նախապես օգտագործվել էր գնահատման համար.
- բ. արտացոլվի որպես նախորդ տարիների չբաշխված շահույթի ճշգրտում
- գ. արտացոլվի որպես նախորդ տարիների չբաշխված շահույթի ճշգրտում, եթե այն տեղի է  
ուն"ցել ավելի քան 3 տարի առաջ, իսկ հակառակ դեպքում ներկայացվի միևնույն  
դասակարգմամբ:

**Հրաց 5. Ընթացիկ ժամանակաշրջանում բացահայտված՝ նախորդ ժամանակաշրջանին**

**վերաբերող սխալը համարվում է էական, եթե՝**

- ա. այն կատարվել է իր բնույթով էական հոդվածի գծով,
- բ. այն ունի այնպիսի նշանակություն, որ անհրաժեշտ է դրա գումարը առանձին  
բացահայտել այդ սխալի ուղղման ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների  
մասին հաշվետվությունում,
- գ. այն ունի այնպիսի նշանակություն, որ նախորդ մեկ կամ ավելի  
ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները չեն կարող այլևս  
արժանահավատ համարվել՝ իրենց ներկայացման ամսաթվերի դրությամբ:

**Հարց 6. Էական սխալների ուղղման հիմնական մոտեցման, նախորդ ժամանակաշրջան-  
ներին վերաբերող էական սխալների ուղղման գումարը պետք է՝**

- ա. ճշգրտի չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը կամ դրա ճանաչումը պետք է հետաձգվի՝ կախված կազմակերպության կողմից ընտրված հաշվապահական հաշվառման քաղաքականությունից
- բ. արտացոլվի ընթացիկ ժամանակաշրջանի զուտ շահույթը կամ վնասը որոշելիս
- գ. նշված բոլոր պատասխաններն էլ սխալ են:

**Հարց 7. Հաշվապահական հաշվեկռի ամսաթվից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքերը  
այն դեպքերն են, որոնք՝**

- ա. տեղի են ունեցել հաշվապահական հաշվեկռի ամսաթվից հետո և հավանական է, որ արդյունքում կազմակերպությունը կունենա միայն տնտեսական օգուտների ներհոսք
- բ. ցույց են տալիս հաշվապահական հաշվեկռի ամսաթվից հետո առաջացած պայմանները (իրավիճակը)
- դ. հաստատում են հաշվապահական հաշվեկռի ամսաթվի դրությամբ գոյություն ունեցող պայմանները (իրավիճակը):

**Հարց 8. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում անավարտ արտադրության մնացորդի  
արտացոլում.**

- ա. Դեբետ 811  
Կրեդիտ 813
- բ. Դեբետ 214  
Կրեդիտ 811
- գ. Դեբետ 118  
Կրեդիտ 811

**Հարց 9. Պատվիրատուի համար կատարված շինարարական աշխատանքների ինքնարժեքի  
արտացոլում՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ.**

- ա. Դեբետ 711  
Կրեդիտ 811
- բ. Դեբետ 221  
Կրեդիտ 811
- գ. Դեբետ 221  
Կրեդիտ 711

**Հարց 10. Ծնաճից ստացված մատղաշ կենդանիների փաստացի ինքնարժեքի արտացոլում.**

ա. Դեբետ 212

Կրեդիտ 811

բ. Դեբետ 212

Կրեդիտ 711

գ. Դեբետ 711

Կրեդիտ 212

**"2025թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ"**

**ՄՐՑՈՒՅԹԻ 16-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ III ՓՈԽԼԻ**

**ԽՆԴԻՐԸ**

ԷՅ ԷՄ ընկերությունը ստեղծվել է 2025թ-ին: Զբաղվում է շինարարական աշխատանքներով և շինարարական նյութերի մանրա-մեծածախ առևտրով: 2025թ-ի սեպտեմբեր ամսվա ընթացքում կատարել է հետևյալ գործարքները:

1. ՌԴ-ից ներմուծել է 45,000,000 ՀՀ դրամ արժեքով ապրանքներ, որը ՀՀ սահմանը հատել է 15. 09. 2025թ, ներմուծաման հայտարարությունը և հայտարարագիրը ներկայացրել է 20. 09. 2025թ. , իսկ ԱԱՀ-ն վճարվել է 01. 10. 2025թ:
2. Չինաստանից ներմուծվել են 40,000 000 ՀՀ դրամ արժողությամբ ապրանքներ, որոնց մասով հայտարարարագիր և վճարումը կատարվել է մինչև 30. 09. 2025թ. :
3. Օգոստոս ամսին ՌԴ-ից ներմուծված 20,000,000 հհ դրամ արժողությամբ ապրանքների մասով հայտարարագիր և հայտարարություն ներկայացվել է օգոստոսին, իսկ վճարումը կատարվել է 10. 09. 2025թ. -ին:
4. ՀՀ տարածքում գնվել են ապրանքներ 12,000,000 ՀՀ դրամ արժողությամբ ապրանքներ (ներառյալ՝ ԱԱՀ), որնց մասով մատակարարին վճարում չի կատարվել:
5. օգոստոսին գնված ապրանքների 100%-ը իրացվել է, որից 50%-ը վերագրվել է ԱԱՀ-ից ազատված գործարքին:
6. ՀՀ տարածքում մանրածախ եղանակով իրացրել է 30,000,000 ՀՀ դրամի ապրանքներ (ներառյալ ԱԱՀ):
7. 1-ին կետով գնված ապրանքները նույն հաշվեռու ժամանակաշրջանում ինքնարժեքի նկատմամբ 10 տոկոս հավելագնով արտահանվել են Վրաստան: Որոշել վճարման (հաշվանցման) ենթակա ԱԱՀ-ն:

**ՊԱՏԱՍԽԱՆ**

|                      | ԱՐ         |           |
|----------------------|------------|-----------|
|                      | դր         | կտ        |
|                      | -          | -         |
|                      | 8,000,000  | -         |
|                      | 4,000,000  | -         |
|                      | 2,000,000  | -         |
|                      | -          | 2,000,000 |
|                      | -          | 5,000,000 |
|                      | -          | -         |
|                      | 14,000,000 | 7,000,000 |
| Հաշվանցման ենթակա ԱՐ | 7,000,000  |           |